



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ №-78

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի հանձնաժողովների իրավասությունները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի հանձնաժողովների պաշտոնական գրությունների ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
8 դեկտեմբերի, 2005թ.
ք.Երևան

Ի Ր Ա Վ Ա Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

1. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2005 թվականի սեպտեմբերի 20-ի «ՀՀ դատարանների նախագահների խորհրդի հանձնաժողովներ ձևավորելու մասին» թիվ 64 որոշմամբ ստեղծված հանձնաժողովները կոչված են ապահովելու «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքով սահմանված ՀՀ դատարանների նախագահների խորհրդի լիազորությունների լիարժեք իրականացումը:

2. Հանձնաժողովների գործունեությունը կանոնակարգվում է սույն որոշմամբ և իրականացվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

3. ՀՀ դատարանների նախագահների խորհրդում ձևավորված հանձնաժողովները ունեն հետևյալ իրավասությունները՝

- ա) Էթիկայի հանձնաժողովը՝
 - քննարկում է «Դատավորի վարքագծի կանոնագրքի» խախտման մասին դիմումները,
 - տալիս է եզրակացություն դատավորի կողմից «Դատավորի վարքագծի կանոնագրքի» խախտման մասին:
- բ) Օրենսդրական հանձնաժողովը՝
 - առաջարկություն է ներկայացնում օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման ուղղությամբ իրավասու պետական մարմիններին դիմելու մասին,
 - տալիս է եզրակացություն ՀՀ դատարանների նախագահների խորհրդի օրենքների կիրառման խորհրդատվական բնույթի պարզաբանում պարունակող որոշումների նախագծերի վերաբերյալ,
 - դատական պրակտիկայի ամփոփման հիման վրա առաջարկություն է ներկայացնում ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշման ընդունման մասին:
- գ) Դատական պրակտիկայի և վիճակագրության հանձնաժողովը՝
 - քննարկում է դատական պրակտիկայի ամփոփման և դատական վիճակագրության նյութերը,
 - առաջարկություն է ներկայացնում միասնական դատական պրակտիկայի ապահովման ուղղությամբ իրականացվելիք գործողությունների վերաբերյալ,
 - ՀՀ դատարանների նախագահների խորհրդի քննարկմանն է ներկայացնում դատական պրակտիկայի ամփոփման և դատական վիճակագրության արդյունքները:
- դ) Դատավորների վերապատրաստման հանձնաժողովը՝
 - քննարկում և տալիս է եզրակացություն դատավորների վերապատրաստման հետ կապված ուսումնական ծրագրերի վերաբերյալ,

- առաջարկություն է ներկայացնում ՀՀ դատավորների վերապատրաստման ուղղությունների մասին:
 - դ) Բյուջետային հանձնաժողովը՝
- եզրակացություն է տալիս ՀՀ դատարանների կողմից բյուջետային միջոցների
 - օգտագործման արդյունավետության մասին,
- եզրակացություն է տալիս բյուջետային միջոցները խախտումներով օգտագործելու, բյուջետային մուտքերի և ծախսերի հաշվառումը սխալ վարելու համար կիրառվող պատասխանատվության մասին,
 - ՀՀ դատարանների նախագահների խորհրդի քննարկմանն է ներկայացնում ՀՀ դատարանների բյուջետային հարաբերությունների հետ կապված ցանկացած հարց:
 - ե) Կազմակերպական հանձնաժողովը՝
- եզրակացություն է տալիս ՀՀ դատարանների բնականոն գործունեության հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ,
 - ՀՀ դատարանների նախագահների խորհրդի քննարկմանն է ներկայացնում ՀՀ դատարանների բնականոն գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների մասին:
 - 4. Հանձնաժողովները՝
 - 1) իրենց իրավասությունների շրջանակում ուսումնասիրում և տալիս են եզրակացություն ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ,
 - 2) ՀՀ դատարանների նախագահների խորհրդի քննարկմանն են ներկայացնում որոշման նախագծեր,
 - 3) կատարում են ՀՀ դատարանների նախագահների խորհրդի նախագահի հանձնարարությունները:
 - 5. Հանձնաժողովի գործունեությունը ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ գործունեության ապահովումն իրականացնում է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի քարտուղարությունը:
 - 5.1. Հանձնաժողովի նախագահը՝
 - ա) վերահսկում է հանձնաժողովի իրավասությանը վերաբերող հարցերի կատարման ընթացքը,
 - բ) ստորագրում է հանձնաժողովի եզրակացությունները և որոշումները,
 - գ) հանձնաժողովի իրավասությանը վերաբերող հարցերով ներկայացնում է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշման նախագիծ, զեկուցում է օրակարգում ընդգրկված հարցերը:
 - 5.2. Հանձնաժողովների գործունեության ապահովման նպատակով ՀՀ դատարանների նախագահների խորհրդի քարտուղարությունը ուսումնասիրում և առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովների իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ:
 - 6. Հանձնաժողովի անդամները տեղեկատվությունը միմյանց կարող են փոխանցել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի քարտուղարության միջոցով: